ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԱՇՈՏԻ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Միքայելի Սուվարյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Սամսոն Աշոտի Դավոյան** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Սարգիս Արմենի Ասատրյանց**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. մայիսի 12–ին, ժամը 13:30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. մարտի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ.Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից պայմաններում աշխարհի գրեթե բոլոր պետությունները բախվում են տնտեսական ինքնիշխանության հետ կապված հիմնախնդիրների: Գործնականում ամբողջապես ինքնիշխան երկրներ գոյություն չունեն, քանի որ անգամ հզոր տնտեսություն ունեցող պետությունները գտնվում են այլ երկրներից, միջազգային ֆինանսական կազմակերպություններից, վերազգային կապիտալից ու վերպետական կառույցներից մշտական կախվածության պայմաններում: Այս իրավիճակը պայմանավորված է վերջին տասնամյակներում համաշխարհային տնտեսության մեջ աճող դերակատարում ստացած ինտեգրացիոն ու գլոբալիզացիոն գործընթացներով, ինչի արդյունքում պետությունները ստիպված են առնվազն մասնակիորեն զիջել իրենց ինքնիշխանությունը՝ համաշխարհային բարիքի ստեղծման գործընթացին մաս կազմելու, տնտեսությունների համար նպաստավոր պայմաններ ստանալու նպատակով: Բազմաթիվ պետություններ տնտեսական բարենպաստ պայմաններ ստանալու նպատակով անդամակցում են վերպետական տնտեսական միավորներին՝ կամավոր կերպով զիջելով տնտեսական ինքնիշխանության որոշակի հատվածը:

Նշված բոլոր գործոնները, տարբեր համամասնություններով, առկա են Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ-ն բաց տնտեսությամբ երկիր է և մաս է կազմում գլոբալիզացիոն գործընթացներին: Երկրի տնտեսությունը բաց է օտարերկրյա ներդրումների համար, դրանց կառուցվածքում տեղ ունեն, այդ թվում՝ վերազգային խոշոր կապիտալի ներկայացուցիչները: Բացի այդ, ՀՀ-ն 2015 թ. անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը՝ ԵՏՄ-ին, ինչով պայմանավորված՝ հրաժարվել է տնտեսական ինքնիշխանության որոշակի բաղադրիչներից՝ արտահանման նոր շուկաներ, առևտրային արտոնյալ պայմաններ ստանալու նպատակով: Թվարկված իրողություններով պայմանավորված՝ տնտեսական ինքնիշխանության հիմնախնդիրը ՀՀ-ի համար ունի՝ ինչպես ընթացիկ կառավարչական, այնպես էլ՝ ռազմավարական նշանակություն, ինչը վկայում է ատենախոսության թեմայի արդիականության մասին:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է՝ ներկայացնել մոտեցումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության պաշտպանությանն ու դրա մակարդակի բարձրացմանը, ինչը հնարավորություն կտա ապահովել կայուն տնտեսական զարգացում: Այս նպատակի իրագործման համար սահմանվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել «տնտեսական ինքնիշխանություն» հասկացության՝ գիտական գրականության շրջանակներում ներկայացված տեսություններն ու

մոտեցումները և տնտեսական ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնները,

- սահմանել և հետազոտել ՀՀ-ի տնտեսական ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնները,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության անբարենպաստ գործոնները և առաջարկել դրա խոցելիության նվազեցման լուծումներ,
- գնահատել տնտեսական ինքնիշխանության պաշտպանության գործընթացում ՀՀ-ի թույլ և ուժեղ կողմերը,
- ներկայացնել ՀՀ-ի տնտեսական ինքնիշխանության պաշտպանությանն ու դրա մակարդակի բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար տեսական, մեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական, ինչպես նաև ժամանակակից տեսությունները, տնտեսական ինքնիշխանության վերաբերյալ հայրենական և օտարերկրյա գիտնականների աշխատանքները, հետազոտությունները, գիտական հրապարակումները և մշակումները: Ուսումնասիրության են ենթարկվել ՀՀ Սահմանադրությունը, օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, գերատեսչական փաստաթղթերը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ պետական կառավարման մարմինների, վիճակագրական ցուցանիշներ հրապարակող միջազգային հեղինակավոր կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր ընկերությունների պաշտոնական հաշվետվությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, ինդուկցիայի (մակածության), դեդուկցիայի (արտածման), համադրման, կառուցվածքային և համակարգային վերլուծությունների մի շարք մեթոդներ: Կիրառվել են նաև փորձագիտական գնահատման մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսության արդյունքներն իրենց բնույթով ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

1. Առաջարկվում է «տնտեսական ինքնիշխանության» նոր սահմանում՝ հիմնված հասկացության՝ ներքին և արտաքին բաղադրիչների բաժանման վրա: Ըստ այդմ, տնտեսական ինքնիշխանությունը պետական իշխանության կարողությունների ամբողջությունն է տնտեսական աճի վերաբերյալ կայացնելու ինքնուրույն, անկախ որոշումներ՝ ազգային տնտեսության մեջ հարաբերականորեն մեծ մասնաբաժին ունեցող խոշոր կապիտալի գործունեության, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ հարաբերությունների, վերպետական կառույցներին անդամակցության և վերազգային կապիտալի՝ ազգային տնտեսության

մեջ ներկայացվածության պայմաններում՝ առանց վերջինների կողմից սուվերենությանը սպառնացող ազդեցության:

2. Մշակվել է տնտեսական ինքնիշխանության գնահատման և կառավարելիության գործակիցների հաշվարկման մեթոդաբանություն՝ համապատասխան ցուցանիշների համակարգի հիման վրա:
3. Ազգային տնտեսությունում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների կառուցվածքի կենտրոնացվածության, ՀՀ-ում «մեկ երկրից կախվածության» համախտանիշի հաղթահարման նպատակով առաջարկվում է, որ տնտեսական ինքնիշխանության պաշտպանության ու դրա մակարդակի բարձրացմանն ուղղված պետական քաղաքականության հիմքում դրվի օտարերկրյա ուղղակի ներդրումների բազմատեսակացման սկզբունքը:
4. Առաջարկվում է ընդունել «Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգ»՝ ներառելով հարաբերականորեն չափելի ցուցանիշներ, որոնց գերազանցումը կծառայի որպես տնտեսական քաղաքականության վերափոխման անհրաժեշտության ահազանգ: «Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգի» շրջանակներում առաջարկվում է սահմանադրական անկախ մարմնի՝ Տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հանձնաժողովի ստեղծումը, որը կզբաղվի տնտեսական ինքնիշխանության պաշտպանության և ամրապնդման պետական քաղաքականության մշակմամբ:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության տեսամեթոդական դրույթները, եզրակացություններն ու առաջարկությունները կարող են տեսական հիմք լինել նոր հետազոտությունների համար: Հետազոտության հիմնական արդյունքները, ընդհանրացումները և վերլուծությունները կարող են օգտագործվել տնտեսական ինքնիշխանության պաշտպանության ու ամրապնդման քաղաքականության մշակման և իրացման գործընթացներում:

Հետազոտության փորձարկումը և հրատարակումները:

Հետազոտության առանցքային դրույթները քննարկվել և հավանության են արժանացել ՀՊՏՀ կառավարման ամբիոնում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են յոթ գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություն և առաջարկություններ բաժնից, օգտագործված 151 անուն գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 165 էջի վրա, ներառյալ՝ գրականության ցանկը: Աշխատանքում ներառված են 17 գծապատկերներ, կից ներկայացված են հավելվածներ, որոնք կազմում են 16 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացված հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Տնտեսական ինքնիշխանությունը՝ որպես կայուն տնտեսական զարգացման կարևոր գործոն»** գլխում ներկայացվել են «տնտեսական ինքնիշխանություն» կատեգորիայի սահմանումներն ու դասակարգումները, ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնները հասկացության վերափոխման միտումները ժամանակակից պայմաններում:

Տնտեսական ինքնիշխանությունը պետության կարողությունն է՝ ինքնուրույն որոշումներ կայացնել սեփական տարածքում սեփական ռեսուրսների տնօրինման, տիրապետման և օգտագործման վերաբերյալ և պաշտպանել այդ իրավունքն այլ երկրների հետ հարաբերություններում:

Ինքնիշխանությունը բազմաբաղադրիչ և բազմաշերտ հասկացություն է, և տարբեր հեղինակների կողմից ներկայացվում են դրա ամենատարբեր ասպեկտները: Սթիվեն Դ. Կրասները, օրինակ, ինքնիշխանությունը դիտարկում է երեք հիմնական հարթություններում[1]՝ 1. Միջազգային իրավական ինքնիշխանություն, 2. Վեստ-ֆալյան/Վատտելյան ինքնիշխանություն, 3. Ներքին ինքնիշխանություն: Ըստ նրա, ո՛չ տրամաբանորեն, ո՛չ էլ էմպիրիկ հարթությունում ինքնիշխանության այս երեք ասպեկտները միահյուսված չեն: Պետությունները կարող են ունենալ ինքնիշխանության մեկ ասպեկտը՝ առանց ունենալու մյուսները:

Պետության տնտեսական ինքնիշխանությունը նրա փաստացի ինքնիշխանության էական բաղադրիչի առարկայացումն է: Որոշակի սահմանափակումներով գրականության մեջ հանդիպում են նաև «ֆինանսական ինքնիշխանություն», «հարկային ինքնիշխանություն», «ռեսուրսային ինքնիշխանություն»[2], «թվային ինքնիշխանություն», «էներգետիկ ինքնիշխանություն», «պարենային ինքնիշխանություն»[3] հասկացություններ:

Կախված այն հանգամանքից՝ ներքի՞ն, թե՞ արտաքին գործոններն են քննարկվում, տարբերվում են նաև տնտեսական ինքնիշխանության չափանիշներն ու

---

[1] Stephen D. Krasner, Power, the State, and Sovereignty Essays on International Relations, Published March 10, 2009 by Routledge

[2] Economic sovereignty of a modern state in the context of sustainable development, Mykola Starinskyi, Zhanna Zavalna, Law, Business & Sustainability Herald, 2021, http://lbsherald.org/index.php/journal/article/view/15/10

[3] Komaitis, K. (2021). Europe's ambition for digital sovereignty must not undermine the Internet's values. Computer Fraud & Security.1, 11-13. https://doi.org/10.1016/S1361-3723(21)00008-7

դրա մակարդակի գնահատման մեթոդաբանությունը: Տնտեսական ինքնիշխանության վրա բացասաբար ազդող գործոնների ներքին խմբին կարելի է դասել ազգային տնտեսության մեջ նշանակալի կշիռ ունեցող ընկերությունների կողմից պետության նկատմամբ ազդեցության լծակների համակարգը, այսինքն՝ պետությունից բիզնեսի համար նպաստավոր պայմաններ կորզելու կարողությունը: Այս շարքում կարևոր նշանակություն ունեն նաև պետության քաղաքական իրողությունները՝ սկսած ներքին քաղաքական ու ինստիտուցիոնալ կառուցվածքից, մինչև իշխանության թևերի միջև հարաբերություններ և ժողովրդավարության մակարդակ:

Տնտեսական ինքնիշխանության վրա ազդող արտաքին գործոնների շարքում կարևոր դեր ունեն տարբեր երկրների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից պետության նկատմամբ ազդեցության լծակները: Դրանց թվին կարելի է դասել նաև օտարերկրյա ներդրումները: Տնտեսական ինքնիշխանության գնահատման ածանցյալ չափորոշիչ կարող է համարվել արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը: Արտաքին սպառնալիքների շարքին է դասվում նաև արտերկրից ստացվող մասնավոր տրանսֆերտների ներհոսքը, որը բնորոշ է բազմաթիվ անցումային տնտեսություններ ունեցող երկրների, այդ թվում՝ ՀՀ-ին:

Տնտեսական ինքնիշխանության ներքին սպառնալիքների՝ ընկերությունների կողմից պետությունից նպաստավոր պայմաններ կորզելու հնարավորության գնահատման նպատակով միջազգային պրակտիկայում ընդունելի է համարվում «լծակային ազդեցության» մոդելը[4], որը ցույց է տալիս ազգային տնտեսությունում հարաբերականորեն մեծ տեսակարար կշիռ ունեցող ընկերությունների՝ ելքի սպառնալիքի միջոցով կառավարության վրա ազդելու հնարավորությունը: Այդ նպատակով հաշվարկվում է պետության նկատմամբ խոշոր կամ գլոբալ ընկերությունների ազդեցության լծակը, որն արտահայտում է՝ 1. տեղական տնտեսության վրա ընկերության ունեցած ազդեցությունը՝ ընկերության «հետքը», 2. ընկերության՝ իր ծագման երկրից դուրս արտադրական ակտիվների բաշխվածությունը՝ ընկերության «գլոբալությունը»: Ավելի բարձր հետք ու գլոբալության ցուցանիշներ ունեցող ընկերությունն ունի ամենամեծ լծակային ազդեցությունը: Հետքի ցուցանիշը ստացվում է ծագման երկրում ընկերության ֆիզիկական ակտիվների ընդհանուր արժեքը բաժանելով երկրի ընթացիկ ՀՆԱ-ի ցուցանիշին: Գլոբալության ցուցանիշը ստացվում է ընկերության՝ երկրից դուրս գտնվող ակտիվների արժեքից ծագման երկրում գտնվող ֆիզիկական ակտիվների արժեքը հանելով: Ստացված թիվն այնուհետև բաժանվում է ընկերության ընդհանուր ֆիզիկական ակտիվների արժեքի վրա:

---

[4] Mitchel G.M., Globalization, internationalization and economic sovereignty in the small European states, BS, Georgia Institute of Technology, 1997 MA, University of Georgia, 2000

Ատենախոսության երկրորդ՝ «**Տնտեսական ինքնիշխանության կառավարչա-տնտեսական հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները ՀՀ-ում**» գլխում կատարվել է տնտեսական ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնների քանակական վերլուծություն: Այդ նպատակով առանձնացվել է գործոնների խումբ, որոնց դրական և բացասական միտումները համապատասխան ազդեցություն կարող են ունենալ տնտեսական ինքնիշխանության մակարդակի վրա: Այդ գործոնները դասակարգվել են հետևյալ խմբերում՝ ժողովրդագրական ցուցանիշներ, մակրոտնտեսական ցուցանիշներ, քաղաքական գործոններ:

Ժողովրդագրական ցուցանիշները պետության տնտեսական ինքնիշխանության վրա առավելապես անուղղակի ազդող, սակայն չափազանց կարևոր, ըստ էության, համակարգաստեղծ գործոններ են: Ինքնիշխանության, այդ թվում՝ տնտեսական ինքնիշխանության աղբյուրը, ինչպես և կրողը հասարակությունն է, երկրի բնակչությունը, հետևաբար, կատարվել է եզրակացություն, որ բնակչության թվի նվազումը (հատկապես՝ բնակչության թվի կրճատման միտում ունեցող երկրներում) կարող է հանգեցնել տնտեսական ինքնիշխանության անկմանը, առնվազն այնքանով, որքանով կրճատվում է դրա կրողների թիվը:

Գծապատկեր 1-ի տվյալները ցույց են տալիս վերջին 30 տարիներին ՀՀ-ում ժողովրդագրական ցուցանիշների ոչ այնքան բարենպաստ զարգացումները:

Գծապատկեր 1. ՀՀ մշտական բնակչության թվի փոփոխության բաղադրիչները, 1990-2020թթ.[5]



[5] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2021թ. , էջ 39

Տնտեսական համամասնությունները ցույց են տալիս՝ որքանով է տնտեսությունը խոցելի կամ հակառակը՝ դիմադրողունակ տնտեսական ինքնիշխանությանն ուղղված մարտահրավերներին դիմագրավելու առումով: Այդ տեսանկյունից ՀՀ տնտեսության կառուցվածքը կարելի է համարել հարաբերականորեն խոցելի, քանի որ տնտեսական համամասնությունների վերլուծությունը ցույց է տալիս արժեշղթայի ոչ այնքան բարձր որակական հատկանիշները, որոնց վերհանման նպատակով վերլուծությունն իրականացվել է ՀՆԱ-ի իրական աճի բաղադրիչների նպաստումների ցուցանիշների հիման վրա:

Գծապատկեր 2. ՀՀ ՀՆԱ իրական աճին առաջարկի բաղադրիչների նպաստումները, տ. կ., 2010-2020թթ.[6]



Գծապատկեր 2–ը և Գծապատկեր 3-ը հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել արժեքի ստեղծման գործընթացի մասին: ՀՆԱ-ի իրական աճին պահանջարկի բաղադրիչների նպաստումների շարքում մտահոգիչ են սպառման՝ հարաբերական բարձր ցուցանիշները, որոնք ըստ տարիների՝ տատանվում են -1.9-10.7 տոկոսային կետի միջակայքում. մտահոգիչը սպառման ցուցանիշների գրեթե մշտական աճն է: Սակայն տնտեսության որակական բնութագրիչների ու հատկապես տնտեսական ինքնիշխանության մակարդակի բարձրացման տեսանկյունից շատ ավելի մտահոգիչ է ՀՆԱ-ի իրական աճին՝ կապիտալ ներդրումների խիստ չափավոր, իսկ տարիների մեծ մասում՝ բացասական նպաստումը:

[6] Գծապատկերը կազմվել, իսկ հաշվարկը՝ կատարվել է հեղինակի կողմից:

Գծապատկեր 3. ՀՀ ՀՆԱ իրական աճին պահանջարկի բաղադրիչների նպաստումները, տ. կ., 2010-2020թթ.[7]



Միջազգայնացման, տնտեսական ինտեգրացիայի, գլոբալիզացիայի և տնտեսական ինքնիշխանության միջև կապը ՀՀ-ում ատենախոսության շրջանակներում դիտարկել է երկու հիմնական ուղղություններով՝ ԵՏՄ-ի և ԵՄ-ի հետ առևտրաշրջանառության հարթություններում: Այդ նպատակով վերլուծության են ենթարկվել 2010-2021 թթ. ՀՀ-ի արտահանման և ներմուծման տարեկան աճի ցուցանիշները և դրանց նպաստումները՝ ըստ գործընկեր երկրների՝ բացահայտելով վերպետական կառույցին անդամակցության և տնտեսական ինքնիշխանության միջև առկա փոխառնչությունները:

Ատենախոսության շրջանակներում քննարկվել են տնտեսական ինքնիշխանությանն ուղղված ներքին սպառնալիքները՝ ի դեմս ազգային տնտեսության մեջ հարաբերականորեն մեծ տեսակարար կշիռ ունեցող ընկերությունների ցուցանիշների: Այդ նպատակով վերլուծության են ենթարկվել 2014-2020 թ. ՀՀ-ի 10 խոշոր հարկատուների տվյալները՝ ըստ ՀՀ պետական բյուջե նրանց վճարած հարկերի և ՀՆԱ-ում ունեցած կշռի՝ հիմնախնդիրը դիտարկելով ազգային տնտեսությունից կապիտալի ելքի սպառնալիքի գործադրմամբ պետության նկատմամբ ազդեցության լծակների համատեքստում: Վերլուծության արդյունքում կատարվել է եզրահանգում, որ ներքին գործոններով պայմանավորված՝ ՀՀ-ի տնտեսական ինքնիշխանությունը գտնվում է հարաբերականորեն կառավարելի մակարդակում:

Հետազոտության շրջանակներում վերլուծության են ենթարկվել նաև տնտեսական ինքնիշխանությանն ուղղված արտաքին հարաբերական սպառնալիքները, այդ թվում՝

[7] Գծապատկերը կազմվել, հաշվարկը՝ կատարվել է հեղինակի կողմից:
Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա, https://armstat.am/am/?nid=202

օտարերկրյա ուղղակի ներդրումների՝ ՕՈՒՆ-ների, ինչպես նաև՝ արտաքին պետական պարտքի, արտերկրից ՀՀ ուղարկվող մասնավոր տրանսֆերտների ցուցանիշները: Դրանց արդյունքում գնահատվել է, որ արտաքին սպառնալիքներից հատկապես ՕՈՒՆ-ների կառուցվածքի տեսանկյունից ՀՀ-ն գտնվում է հարաբերականորեն խոցելի դիրքերում, քանի որ առկա է «մեկ երկրից կախվածության» համախտանիշ: Միևնույն ժամանակ, ըստ նույն գնահատման, ՀՀ-ն հարաբերականորեն կառավարելի իրավիճակում է արտաքին պետական պարտքի տեսանկյունից. չնայած բացարձակ բարձր արժեքին, արտաքին պետական պարտքի կառուցվածքը բազմատեսակացված է, ինչը նվազեցնում է մեկ երկրից/կազմակերպությունից կախվածության ռիսկը: Ինչ վերաբերում է արտերկրից ուղարկվող տրանսֆերտներին, ապա եզրակացվել է, որ ընդհանուր և մասնավոր տրանսֆերտները մեծ ազդեցություն ունեն ՀՀ-ում պահանջարկի ձևավորման վրա և սահմանափակում են տնտեսական ինքնիշխանության շրջանակը:

Վերպետական կառույցներին անդամակցության և տնտեսական ինքնիշխանության միջև փոխառնչությունների բացահայտման նպատակով ատենախոսության շրջանակներում վերլուծության են ենթարկել ՀՀ-ի՝ ԵՏՄ-ին անդամակցության իրավապայմանագրային հիմքերը: Ներկայացվել են կենսական ոլորտներում ԵՏՄ-ին անդամակցությամբ պայմանավորված ինքնիշխանության սահմանափակման հիմնական դրույթները և արձանագրվել է, որ այդ կառույցին անդամակցության արդյունքում ԵՏՄ-ի բարձրագույն մարմնի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կանոնակարգման տակ են անցել ոլորտներ, որոնք կամ ամբողջությամբ, կամ մասամբ գտնվում են պետությունների ինքնիշխանության տիրույթում:

Ատենախոսության երրորդ՝ «**ՀՀ տնտեսական ինքնիշխանության մակարդակի կարգավորման կառավարչական մեթոդների կատարելագործման և տնտեսական ինքնիշխանության ամրապնդման հիմնական գերակայությունները**» գլխում՝ հիմնվելով հետազոտության տեսական և գործնական հատվածների արդյունքների վրա, ներկայացվել է տնտեսական ինքնիշխանության չափման հնարավորություն տվող գործակիցների հաշվարկման մեթոդաբանություն: Քանի որ տնտեսական ինքնիշխանության վրա ազդող բոլոր գործոնների ազդեցությունը գործնականում չափել հնարավոր չէ, գիտական նպատակահարմարության տեսանկյունից առանձնացվել են գործոնների երկու խոշոր՝ արտաքին և ներքին գործոնային խմբեր, որոնց միջոցով առաջարկվել է հաշվարկել Տնտեսական ինքնիշխանության կառավարելիության՝ ՏԻԿ գործակիցը: ՏԻԿ գործակցի հաշվարկի հիմքում ընկած է հաշվետու ժամանակաշրջանում (1 տարվա ընթացքում) տնտեսական աճի ապահովման գործընթացում առավել նշանակալի ազդեցություն ունեցող արտաքին և ներքին գործառնությունների հանրագումարների հարաբերությունը: Մասնավորապես, որպես

արտաքին գործառնությունների բաղադրիչներ՝ դիտարկվում են հաշվետու ժամանակահատվածում արտահանման և ներմուծման, նույն ժամանակահատվածում կապիտալ տրանսֆերտների և ընդհանուր տրանսֆերտների, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների և ընդհանուր ներդրումների հարաբերությունների ցուցանիշները: Տնտեսական աճի ապահովման գործընթացում նշանակալի ազդեցություն ունեցող արտաքին գործոնների հանրագումարը, ըստ բանաձևի, հարաբերվում է նույն ժամանակահատվածում տնտեսական աճի ապահովման գործընթացում էական ներգործություն ունեցող ներքին գործոնների հանրագումարին: Որպես տնտեսական աճի ապահովման գործընթացում էական ազդեցություն ունեցող ներքին գործոններ են դիտարկվում՝ համախառն խնայողությունների և համախառն ներքին արդյունքի ցուցանիշների հարաբերությունը, սուբսիդիաների և ընդհանուր տնտեսական ծախսերի հարաբերությունը, ինչպես նաև պետական կապիտալ ներդրումների և պետական գնումների հարաբերությունը: Գործոնների այս խումբն արտահայտում է տնտեսական աճի ապահովման գործընթացում առավել նշանակալի ներքին գործոնների ներդրումը: Այսպիսով, Տնտեսական ինքնիշխանության կառավարելիության՝ ՏԻԿ գործակցի հաշվարկման համար արտաքին գործոնների խմբում ներկայացվում են՝

1. Արտահանում/Ներմուծում հարաբերությունը - նշանակվում է **F տառով**
2. Կապիտալ տրանսֆերտներ/Ընդհանուր տրանսֆերտներ հարաբերությունը - նշանակվում է **O տառով**
3. Օտարերկրյա ուղղակի ներդրումներ/Ընդհանուր ներդրումներ հարաբերությունը - նշանակվում է **R տառով**

FOR- foreign՝ օտարերկրյա, արտաքին

Գործակցի հաշվարկման ներքին գործոնային խմբում առաջարկվում է ներառել՝

1. Համախառն խնայողություններ/ՀՆԱ հարաբերությունը - նշանակվում է **I տառով**
2. Սուբսիդիաներ/Ընդհանուր տնտեսական ծախսեր հարաբերությունը - նշանակվում է **N տառով**
3. Պետական կապիտալ ներդրումներ/Պետական գնումներ հարաբերությունը - նշանակվում է **T տառով**

INT-internal՝ ներքին, ներքնապես

Տնտեսական ինքնիշխանության կառավարելիության գործակիցը՝ ՏԻԿ-ը, հաշվարկվում է հետևյալ բանաձևով:

Բանաձև 1

$$\text{ՏԻԿ} = \frac{\Sigma \text{FOR}}{\Sigma \text{INT}} < 1$$

Կարևոր է նշել, որ բանաձևում ներկայացված ցուցանիշների միջև կորելացիոն կապը բացակայում է:

Տնտեսական ինքնիշխանության կառավարելիության ցուցանիշի համար առանձնացվում է երեք միջակայք, ըստ այդմ՝ նաև ինքնիշխանության կառավարելիության երեք մակարդակ:

- 0-0.5 կամ 1/2 - ինքնիշխանության կառավարելիության բարձր մակարդակ
- 0.5-0.7 կամ 2/3 ինքնիշխանության կառավարելիության միջին մակարդակ
- 07.-1 ինքնիշխանության կառավարելիության ցածր մակարդակ

Եթե ՏԻԿ> 1, ապա պետական իշխանության մարմինները գործնականում ազդեցություն չունեն տնտեսական ինքնիշխանության կառավարման գործընթացում:

Տնտեսական ինքնիշխանության կառավարելիության՝ ՏԻԿ գործակիցը հնարավորություն է տալիս հաշվարկել տնտեսական ինքնիշխանության աստիճանի գնահատման հարաբերական գործակիցը՝ ՏԻԳ-ը: Գործակցի հաշվարկման համար առանձնացվում են պետության տնտեսական ինքնիշխանության վրա առավել մեծ ազդեցություն ունեցող 5 խումբ գործոններ՝ համապատասխան կշռային գնահատումներով և ենթագործակիցներով: ՏԻԳ գործակցի հաշվարկման գործոններն են՝

1. Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
2. Արտաքին պետական պարտք
3. Ընկերությունների՝ ելքի սպառնալիքով կառավարության նկատմամբ ազդեցություն
4. Միգրացիա
5. Մասնավոր տրանսֆերտներ

Գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունը տնտեսական ինքնիշխանության մակարդակի վրա նշանակվում է համապատասխան կշռային արժեքով՝ հիմք ընդունելով ատենախոսության շրջանակներում տվյալ գործոնների վերլուծությունը և դրա արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատականը: Այդպիսով, ըստ տնտեսական ինքնիշխանության մակարդակի վրա ազդեցության կարևորության, գործոնային խմբերը ստացել են հետևյալ կշռային գնահատումները.

1. Օտարերկրյա ուղղակի ներդրումներ՝ Կշիռը = 0.3
2. Արտաքին պետական պարտք՝ Կշիռը = 0.3
3. Ընկերությունների՝ ելքի սպառնալիքով կառավարության նկատմամբ ազդեցություն՝ Կշիռը = 0.2
4. Միգրացիա՝ Կշիռը = 0.1
5. Մասնավոր տրանսֆերտներ՝ Կշիռը = 0.1

Նույն սկզբունքով գնահատվել են նաև գործոնային խմբերից յուրաքանչյուրի ենթագործակիցները, որոնք մանրամասն ներկայացված են ատենախոսության և հրապարակված հոդվածների շրջանակում: Ըստ այդմ, ՏԻԳ-ի հաշվարկման տրամաբանության հիմքում տնտեսական ինքնիշխանության վրա առավել մեծ ազդեցություն ունեցող գործոնների հանրագումարի (դրանց համապատասխան կշիռներով) և դրանց հակակշռող ՏԻԿ (տնտեսական ինքնիշխանության կառավարելիության) գործակցի հարաբերությունն է: ՏԻԳ-ի հաշվարկման բանաձևը կունենա հետևյալ տեսքը՝

Բանաձև 2

$$\text{ՏԻԳ} = \frac{0.3\text{A} + 0.3\text{B} + 0.2\text{C} + 0.1\text{D} + 0.1\text{E}}{\text{ՏԻԿ}}$$

Հաշվի առնելով տնտեսական ինքնիշխանության աստիճանի գնահատման հարաբերական գործակիցը՝ առաջարկվում է երկրները դասակարգել հետևյալ 3 խմբերի՝

- ՏԻԳ= 0-0.3 ինքնիշխանության ցածր մակարդակ ունեցող երկրներ
- ՏԻԳ= 0.3-0.7 ինքնիշխանության միջին մակարդակ ունեցող երկրներ
- ՏԻԳ= 0.7-ից բարձր՝ ինքնիշխանության բարձր մակարդակ ունեցող երկրներ

Եթե ՏԻԳ արժեքը մեծ է 1-ից, ապա ենթադրվում է, որ տվյալ պետության տնտեսական ինքնիշխանության կառավարումն ունի համակարգային, ինստիտուցիոնալ բնույթ և առանձին գործոնների փոփոխությունը կարճաժամկետ հատվածում էական ազդեցություն չի կարող ունենալ ինքնիշխանության մակարդակի վրա:

Ատենախոսության շրջանակներում ներկայացվել են նաև ՏԻԿ և ՏԻԳ գործակիցների հաշվարկները Հայաստանի Հանրապետության համար՝ տարբեր տարիներին, որոնք ընտրվել են՝ հաշվի առնելով հետազոտության նպատակները: Աղյուսակ 1–ում ներկայացված են Հայաստանի Հանրապետության Տնտեսական ինքնիշխանության աստիճանի գնահատման հարաբերական գործակցի՝ ՏԻԳ-ի ցուցանիշները 2012, 2015, 2019, 2021 թվականների համար:

Աղյուսակ 1 - Տնտեսական ինքնիշխանության աստիճանի գնահատման հարաբերական գործակցի՝ ՏԻԳ-ի հաշվարկման ցուցանիշները 2012, 2015, 2019, 2021 թվականներին[8]

Գործոն	Կշիռ	2012		2015		2019		2021	
		Ցուցանիշ	Կշռված արժեք	Ցուցանիշ	Կշռված արժեք	Ցուցանիշ	Կշռված արժեք	Ցուցանիշ	Կշռված արժեք
ՕՈՒՆ գործակից՝ A	0.3	0.2	0.06	0.3	0.09	0.2	0.06	0.3	0.09
Արտ. պարտքի գործակից՝ B	0.3	0.3	0.09	0.3	0.09	0.3	0.09	0.3	0.09
Ելքի ազդեցություն՝ C	0.2	0.3	0.06	0.3	0.06	0.3	0.06	0.3	0.06
Միգրացիա՝ D	0.1	0.2	0.02	0.2	0.02	0.2	0.02	0.1	0.01
Մասնավոր տրանսֆերտներ՝ E	0.1	0.3	0.03	0.3	0.03	0.3	0.03	0.3	0.03
ՏԻԿ	-		0.72		0.81		0.46		0.73
ՏԻԳ	-		0.36		0.36		0.57		0.38

Ատենախոսության տեսական և վերլուծական հատվածների արդյունքում կատարված եզրահանգումների հիման վրա, աշխատանքի այս հատվածում առաջարկվել է «տնտեսական ինքնիշխանություն» հասկացությունը բաժանել երկու՝ ներքին և արտաքին բաղադրիչների և դրա հիման վրա ներկայացվել է հասկացության նոր սահմանում: Ըստ այդմ, տնտեսական ինքնիշխանությունը պետական իշխանության կարողությունների ամբողջությունն է՝ տնտեսական աճի վերաբերյալ կայացնելու ինքնուրույն, անկախ որոշումներ՝ ազգային տնտեսության մեջ հարաբերականորեն մեծ մասնաբաժին ունեցող խոշոր կապիտալի գործունեության, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ հարաբերությունների, վերպետական կառույցներին անդամակցության և վերազգային կապիտալի՝ ազգային տնտեսության մեջ ներկայացվածության պայմաններում՝ առանց վերջինների կողմից սուվերենությանը սպառնացող ազդեցության:

Աշխատանքի այս հատվածում վերլուծության է ենթարկվել ՀՀ-ի տնտեսական ինքնիշխանության մակարդակը՝ համաձայն ներկայացված բաժանման՝ առանձին-առանձին դիտարկելով ներքին և արտաքին տնտեսական ինքնիշխանության տարբեր ուղղություններով երկրի ուժեղ և թույլ կողմերը:

Հետազոտության երրորդ գլխում առաջարկվել է նաև ընդունել «Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքիշխանության պաշտպանության հայեցակարգ» և դրա հիման վրա ստեղծել Տնտեսական ինքնիշխանության պաշտպանությամբ զբաղվող անկախ սահմանադրական հանձնաժողով: Ատենախոսությամբ առաջարկվել է նաև տնտեսական ինքնիշխանության մակարդակի բարձրացման նպատակով օգտագործել հայկական սփյուռքի ներուժը՝ դրա հիմքում դնելով վենչուրային ինստիտուտը: Այդ

[8] Աղյուսակը կազմվել, հաշվարկը՝ կատարվել է հեղինակի կողմից:

առաջարկի իրագործման համար նպատակահարմար է դիտարկվել Տնտեսական ինքնիշխանության կայունացման Հայաստան–Սփյուռք վենչուրային հիմնադրամի ստեղծումը: Գծապատկեր 4–ում ներկայացված է Տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հանձնաժողովի կառավարման կազմակերպական կառուցվածքը և կապը տնտեսական ինքնիշխանության կայունացման Հայաստան–Սփյուռք հիմնադրամի հետ:



Գծապատկեր 4. ՀՀ տնտեսական ինքնիշխանության պաշտպանության Հանձնաժողովի կառավարման կազմակերպական կառուցվածքը և կապը Հայաստան-Սփյուռք վենչուրային հիմնադրամի հետ[9]

Եզրակացություն բաժնում զետեղվել են հետազոտության արդյունքները և կատարվել առաջարկություններ տնտեսական ինքնիշխանության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես՝

1. «Տնտեսական ինքնիշխանություն» հասկացության՝ տեսական գրականության մեջ առկա սահմանումներն առաջարկվում է լրացնել նոր սահմանմամբ՝ հիմնվելով հասկացության ներքին և արտաքին հայեցակետերի բաղդատման մոտեցման վրա: Առաջարկվող սահմանմամբ՝ տնտեսական ինքնիշխանությունը պետական իշխանության կարողությունների ամբողջությունն է՝ տնտեսական աճի վերաբերյալ կայացնելու ինքնուրույն, անկախ որոշումներ՝ ազգային տնտեսության

[9] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

մեջ հարաբերականորեն մեծ մասնաբաժին ունեցող խոշոր կապիտալի գործունեության, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ հարաբերությունների, վերպետական կառույցներին անդամակցության և վերազգային կապիտալի՝ ազգային տնտեսության մեջ ներկայացվածության պայմաններում՝ առանց վերջինների կողմից սուվերենությանը սպառնացող ազդեցության: Տնտեսական ինքնիշխանության բաղդատման մոտեցման հիման վրա առաջարկվում է հասկացության մեկ այլ տարատեսակ՝ ֆրագմենտար կամ հատվածական տնտեսական ինքնիշխանություն, ըստ որի, պետությունը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն զրկված լինելով, օրինակ, ներքին ինքնիշխանությունից, կարող է ունենալ արտաքին տնտեսական ինքնիշխանության բնորոշիչներ, կամ հակառակը:

2. Ատենախոսության շրջանակներում մշակվել է տնտեսական ինքնիշխանության կառավարելիության՝ ՏԻԿ գործակցի հաշվարկման մեթոդաբանություն: ՏԻԿ գործակցի հաշվարկի հիմքում ընկած է հաշվետու ժամանակաշրջանում (1 տարվա ընթացքում) տնտեսական աճի ապահովման գործընթացում առավել նշանակալի ազդեցություն ունեցող արտաքին և ներքին գործառնությունների հանրագումարների հարաբերությունը: Որպես արտաքին գործառնությունների բաղադրիչներ՝ դիտարկվում են հաշվետու ժամանակահատվածում արտահանման և ներմուծման (F), նույն ժամանակահատվածում կապիտալ տրանսֆերտների և ընդհանուր տրանսֆերտների (O), ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների և ընդհանուր ներդրումների հարաբերությունների ցուցանիշները (R): Որպես տնտեսական աճի ապահովման գործընթացում էական ազդեցություն ունեցող ներքին գործոններ են դիտարկվում՝ համախառն խնայողությունների և համախառն ներքին արդյունքի ցուցանիշների հարաբերությունը (I), սուբսիդիաների և ընդհանուր տնտեսական ծախսերի հարաբերությունը (N), ինչպես նաև պետական կապիտալ ներդրումների և պետական գնումների հարաբերությունը (T): Ըստ այդմ, տնտեսական ինքնիշխանության կառավարելիության՝ ՏԻԿ գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՏԻԿ} = \frac{\Sigma \text{FOR}}{\Sigma \text{INT}} < 1 :$$

Գործակցի հիման վրա առաջարկվում է պետությունները դասակարգել երեք հիմնական խմբերում՝

- 0-0.5 կամ 1/2 - ինքնիշխանության կառավարելիության բարձր մակարդակ,
- 0.5-0.7 կամ 2/3 ինքնիշխանության կառավարելիության միջին մակարդակ,
- 07.-1 ինքնիշխանության կառավարելիության ցածր մակարդակ

3. Տնտեսական ինքնիշխանության կառավարելիության՝ ՏԻԿ գործակցի հիման վրա մշակվել է տնտեսական ինքնիշխանության աստիճանի գնահատման

հարաբերական՝ ՏԻԳ գործակցի հաշվարկման մոդելը: Գործակցի հաշվարկման համար առանձնացվում են պետության տնտեսական ինքնիշխանության վրա առավել մեծ ազդեցություն ունեցող 5 խումբ գործոններ՝ համապատասխան կշռային գնահատումներով և ենթագործակիցներով: Դրանք են՝ 1. Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (A), 2. Արտաքին պետական պարտք (B), 3. Ընկերությունների՝ ելքի սպառնալիքով կառավարության նկատմամբ ազդեցություն (C), 4.Միգրացիա (D), 5. Մասնավոր տրանսֆերտներ (E): Այս գործոնների համապատասխան կշռային գնահատականներով արտադրյալների գումարը հարաբերվում է ՏԻԿ գործակցին:

ՏԻԳ գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՏԻԳ} = \frac{0.3A + 0.3B + 0.2C + 0.1D + 0.1E}{\text{ՏԻԿ}}$$

Հաշվի առնելով տնտեսական ինքնիշխանության աստիճանի գնահատման հարաբերական՝ ՏԻԳ գործակիցը՝ առաջարկվում է երկրները դասակարգել հետևյալ 3 խմբերի՝

- ՏԻԳ= 0-0.3 ինքնիշխանության ցածր մակարդակ ունեցող երկրներ
- ՏԻԳ= 0.3-0.7 ինքնիշխանության միջին մակարդակ ունեցող երկրներ
- ՏԻԳ= 0.7-ից բարձր՝ ինքնիշխանության բարձր մակարդակ ունեցող երկրներ

4. Առաջարկված մեթոդաբանությամբ հաշվարկվել են ՏԻԿ և ՏԻԳ գործակիցները Հայաստանի Հանրապետության համար 2012, 2015, 2019, 2021 թվականների համար: Հաշվարկները ցույց են տվել, որ Հայաստանի Հանրապետությունը նշված ժամանակահատվածում տնտեսական ինքնիշխանության կառավարելիության՝ ՏԻԿ գործակցով դասվել է կառավարելիության միջին մակարդակ ունեցող երկրների թվին, իսկ տնտեսական ինքնիշխանության աստիճանի գնահատման հարաբերական՝ ՏԻԳ գործակցով՝ որոշ տարիների՝ ցածր, այլ դեպքում՝ միջին տնտեսական ինքնիշխանություն ունեցող պետությունների շարքին:
5. Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական ինքնիշխանությանն ուղղված սպառնալիքների թվում լուրջ նշանակություն ունեն վերպետական միավորների, մասնավորապես՝ Եվրասիական տնտեսական միության անդամակցությամբ պայմանավորված ռիսկերը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կառույցին անդամակցության արդյունքում Հայաստանի Հանրապետությունը մասամբ զիջել է իր իրավասությունները պետության ինքնիշխանության համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են մաքսային, հարկային բնագավառները, մակրոտնտեսական, արժութային քաղաքականությունների ոլորտը: Բացի այդ,

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունը, մի կողմից՝ ապահովելով արտահանման լայն շուկաներ, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունը կախվածության մեջ է դնում այդ ուղղությունից: Նշված հիմնախնդրի հաղթահարման նպատակով առաջարկում է տարածաշրջանային ինտեգրացիայի միջոցով վերպետական միավորումներին անդամակցությամբ պայմանավորված ինքնիշխանությանն ուղղված ռիսկերի համահարթեցման թեզը, որը կարող է գործնական կիրառում ստանալ տնտեսական քաղաքականության շրջանակներում:

6. Օտարերկրյա ներդրումների՝ ըստ ծագման երկրի կենտրոնացվածության հիմնախնդրի երկարաժամկետ լուծման նպատակով առաջարկվում է կիրառել վենչուրային հիմնադրամների ինստիտուտը, որը Հայաստանի Հանրապետությունում գտնվում է զարգացման ամենավաղ փուլում: Վենչուրային հիմնադրամները, այդ թվում՝ պետական խորհրդանշական մասնակցությամբ, կարող են ստեղծվել այն սկզբունքով, որ ներդրումներ կատարեն տնտեսության՝ առավել կենտրոնացվածություն ունեցող ոլորտներում, որոնցում մեծ է օտարերկրյա առանձին վերցված մեկ պետության ծագում ունեցող կապիտալի տեսակարար կշիռը: Պետությունն այդ հիմնադրամներում կարող է հանդես գալ որպես դիտարկվող ոլորտում առկա եկամտաբերության և հնարավոր այլ վենչուրային ներդրման միջև տարբերության փոխհատուցող, ինչը միևնույն ժամանակ կնպաստի այդ ոլորտում մրցակցության աճին: Հայաստանի Հանրապետության պարագայում տնտեսական ինքնիշխանության մակարդակի բարձրացման հնարավոր աղբյուրները ներառում են նաև հարաբերականորեն ոչ ստանդարտ, աշխարհի բազմաթիվ պետությունների համար ոչ հասու միջոցներ: Խոսքը, մասնավորապես, հայկական սփյուռքի ներուժի օգտագործման մասին է՝ հենց տնտեսական ինքնիշխանության բարձրացման նպատակով: Հայկական սփյուռքի ներուժը, այդ թվում՝ զգալի ֆինանսական կարողությունները, հնարավոր է օգտագործել՝ այդ նպատակի հիմքում դնելով մի կողմից՝ տնտեսական արդյունավետությունը, մյուս կողմից՝ վերջինի միջոցով տնտեսական ինքնիշխանության մակարդակի բարձրացումը: Վենչուրային ինստիտուտը և սփյուռքի կարողությունները տնտեսական նախագծերին ուղղորդելու հիմնադրամը կարող են արդյունավետ կերպով համատեղվել՝ ապահովելով մուլտիպլիկատիվ արդյունք:

7. Տնտեսական ինքնիշխանության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետությունում առկա ինստիտուցիոնալ բացը լրացնելու նպատակով առաջարկվում է ընդունել «Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգ», որը կարող է

գործել՝ ինչպես առանձին իրավական փաստաթղթի կարգավիճակով, այնպես էլ՝ ներառվել գործող Ազգային անվտանգության ռազմավարության շրջանակներում: «Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգը» կարող է պարունակել հարաբերականորեն չափելի ցուցանիշներ (այդ թվում՝ ՏԻԿ և ՏԻԳ գործակիցները), որոնց գերազանցումն անթույլատրելի կհամարվի տնտեսական քաղաքականությունն իրականացնողների համար և կծառայի որպես տնտեսական քաղաքականության վերափոխման անհրաժեշտության ահազանգ:

8. «Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգի» շրջանակներում առաջարկվում է սահմանադրական անկախ մարմնի՝ Տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հանձնաժողովի ստեղծումը, որը կզբաղվի տնտեսական ինքնիշխանության պաշտպանության և ամրապնդման պետական քաղաքականության մշակմամբ: Հանձնաժողովի երաշխավորություններն ուղենիշային կհամարվեն պետական կառավարման մարմինների համար՝ իրենց համակարգման բնագավառներում տնտեսական ինքնիշխանությանն առնչվող հիմնախնդիրների կառավարման գործընթացում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Սուվարյան Յու. Մ., Գևորգյան Գ., Տնտեսական ինքնիշխանության չափանիշները և գնահատման մեթոդաբանությունը, «Այլընտրանք» գիտական հանդես, #2, 2022, էջ 210-217:
2. Գևորգյան Գ. Տնտեսական ինքնիշխանության էությունը և հիմնական հայեցակետերը: Տնտեսական ինքնիշխանություն և ազատականություն, Լրաբեր Հասարակական գիտությունների, #1 (664), 2022, էջ 73-87:
3. Գևորգյան Գ., Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության արտաքին հարաբերական սպառնալիքների վերլուծություն, Հանրային Կառավարում գիտական հանդես, 1/2022, էջ 90-105:
4. Գևորգյան Գ., Տնտեսական ինքնիշխանությանն ուղղված սպառնալիքները՝ խոշոր և վերազգային կապիտալի գործունեության համատեքստում, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, No 3, 2022, էջ 148-156:
5. Գևորգյան Գ., Որոշումների կայացման գործընթացի փոխակերպումները՝ տնտեսական ինքնիշխանությանն ուղղված մարտահրավերների պայմաններում, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, No 4, 2022, էջ 147-151:

6. Գևորգյան Գ. ՀՀ տնտեսական ինքնիշխանության հիմնահարցերը՝ արտաքին տնտեսական հարաբերությունների համապատկերում, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդես, 2022 N3, էջ 112-130:
7. Գևորգյան Գ., Տնտեսական ինքնիշխանության գնահատման և կառավարման գործակիցների հաշվարկման մեթոդաբանություն, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, No 6, 2022, էջ 181-187:

GARNIK ASHOT GEVORGYAN

THE MANAGERIAL ISSUES OF THE ECONOMIC SOVEREIGNITY OF THE STATE (BASED ON THE MATERIALS OF THE RA)

The dissertation is submitted for pursuing scientific degree of PhD of Economic sciences in the field of 08.00.02-"Economy, the economics of it spheres and control".
The defense of the dissertation will take place at 13:30 p.m. on May 12, 2023, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, address: 0025, Yerevan, Abovyan str.52

ABSTRACT

Relevance of the dissertation topic: In modern conditions, almost all the countries of the world face problems related to economic sovereignty. Actually, there are no completely sovereign countries, because even the ones with a powerful economy are in conditions of constant dependence on other countries, international financial organizations, supranational capital and structures. This situation is due to the integration and globalization processes that have played an increasing role in the world economy in recent decades, as a result of which the countries have to at least partially give up their sovereignty in order to be part of the process of creating global products, in order to obtain favorable conditions for economies. A great number of countries join supranational economic units in order to obtain favorable economic conditions, voluntarily ceding a certain part of economic sovereignty.

All these above-mentioned factors, in different proportions, are present in the Republic of Armenia. The RA is a country with an open economy and is a part of globalization processes. The economy of the country is open to foreign investments, including the representatives of large supranational capital. In addition, in 2015, the RA joined the Eurasian Economic Union, EEU, due to which it has given up certain components of economic sovereignty in order to obtain new export markets and preferential trade conditions. Because of the listed realities, the issue of economic sovereignty has both current managerial as well as strategic significance for the RA, which proves the relevance of the dissertation topic.

Purpose and objectives of the dissertation:

The purpose of the research is to present approaches aimed at protecting the economic sovereignty of the RA and enhancing its level, which will provide an opportunity to ensure sustainable economic development. The following tasks have been defined to achieve this goal:

- examine the concepts of "economic sovereignty", the theories and approaches presented in the scientific literature and the main factors affecting economic sovereignty,
- define and research the main factors affecting the economic sovereignty of the RA,
- analyze the unfavorable factors of the economic sovereignty of the Republic of Armenia and put forward solutions to reduce its vulnerability,
- evaluate the weaknesses and strenghts of the RA in the process of protecting economic sovereignty,
- present recommendations aimed at protecting the economic sovereignty of RA and increasing its level.

Research methods.

A number of methods of statistical, induction, deduction, comparison, structural and systematic analysis were used during the research. Expert evaluation methods were also applied.

The main scientific results and novelty of the study:

1. A new definition of "economic sovereignty" is proposed, based on the division of the concept into internal and external components. Accordingly, economic sovereignty is the total sum of the capabilities of the state government to make independent decisions regarding economic growth, in the conditions of the activities of large capital with a relatively large share in the national economy, relations with international financial organizations, membership in supranational structures, and representation of supranational capital in the national economy, without the influence of the threatening sovereignty of the latter.
2. A methodology for the assessment of economic sovereignty and the calculation of manageability coefficients was developed based on the system of relevant indicators.
3. To overcome the centralization of the structure of foreign direct investments made in the national economy and the syndrome of "dependence on one single country" in the RA, it is suggested putting the principle of diversity of foreign direct investments as the milestone of the state policy aimed at protecting economic sovereignty and enhancing its level.
4. It is recommended to adopt the "Concept for the Protection of the Economic Sovereignty of the Republic of Armenia", including relatively measurable indicators, the exceeding of which will serve as an alarm to transform the economic policy. Within the framework of the "Concept for the Protection of the Economic Sovereignty of the Republic of Armenia", it is proposed to create an independent constitutional body, the Commission for the Protection of Economic Sovereignty, which will deal with the development of the state policy for the protection and strengthening of economic sovereignty.

ГАРНИК АШОТОВИЧ ГЕВОРГЯН

УПРАВЛЕНЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОГО СУВЕРЕНИТЕТА ГОСУДАРСТВА (ПО МАТЕРИАЛАМ РА)

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика и управление народным хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится в 13:30, 12 мая 2023 г. в, на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете, адрес: 0025 г. Еревн, ул. Абовяана 52

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертации.

В современных условиях фактически все государства мира сталкиваются с проблемами, связанными с экономическим суверенитетом. Практически полностью суверенных стран не существует, так как даже страны с сильной экономикой находятся в условиях постоянной зависимости от других стран, международных финансовых организаций, наднационального капитала и надгосударственных организаций. Эта ситуация обусловлена увеличивающейся ролью интеграционных и глобализационных процессов в мировой экономике за последние десятилетия, в результате чего государства вынуждены пойти хотя бы на частичные уступки в плане суверенитета, чтобы стать частью процесса создания всемирного блага, получения выгодных условий для экономик. Многочисленные страны становятся членами надгосударственных экономических единиц для получения благоприятных экономических условий, добровольно уступая определенную часть экономического суверенитета.

Все указанные факторы в той или иной степени присутствуют и в Республике Армения. РА – страна с открытой экономикой и является частью глобализационных процессов. Экономика страны открыта для иностранных инвестиций, в структуре которых, в том числе, присутствуют представители наднационального крупного капитала. Кроме этого, с 2015 РА является членом Евразийского экономического союза – Евразэс, в связи с чем отказалась от определенных компонентов экономического суверенитета, для получения новых рынков экспорта и льготных торговых условий.

Будучи обусловленной перечисленными реалиями, проблема экономического суверенитета для РА имеет как управленческое, так и стратегическое значение, что говорит об актуальности темы диссертации.

Цель и задачи исследования.

Цель исследования – представить подходы, направленные на защиту и повышение уровня экономического суверенитета РА, что позволит обеспечить стабильное экономическое развитие. Для реализации данной цели были определены следующие задачи:

- Изучить понятие "экономический суверенитет": теории и подходы, представленные в рамках научной литературы, а также основные факторы, влияющие на экономический суверенитет,
- Определить и исследовать основные факторы, влияющие на экономический суверенитет РА,
- Проанализировать неблагоприятные факторы экономического суверенитета РА и предложить решения, снижающие его уязвимость,
- Оценить сильные и слабые стороны РА в процессе защиты экономического суверенитета,
- Представить предложения, направленные на защиту и повышение уровня экономического суверенитета РА.

Методы исследования.

В процессе исследования применялся ряд методов статистики, индукции, дедукции, сопоставления, структурного и системного анализа. Применялись также методы экспертной оценки.

Основные результаты исследования и его научная новизна заключается в следующем.

1. Было предложено новое определение понятия "экономический суверенитет", основанное на разделении понятия на внешние и внутренние компоненты. Таким образом, экономический суверенитет – это единое целое возможностей государственной власти принимать самостоятельные, независимые решения касательно экономического роста в условиях деятельности крупного капитала, имеющего сравнительно большую долю в национальной экономике, отношений с международными финансовыми организациями, членства в надгосударственных структурах и представленности наднационального капитала в национальной экономике без угрожающего влияния последних на суверенитет.
2. Разработана методика расчета коэффициентов оценки и управляемости экономического суверенитета на основании системы соответствующих показателей.
3. С целью преодоления централизации структуры прямых иностранных инвестиций в национальной экономике, синдрома "зависимости от одной

страны" в РА, предлагается, чтобы в основу государственной политики, направленной на защиту и повышение уровня экономического суверенитета был положен принцип диверсификации прямых иностранных инвестиций.

4. Предлагается принять "Концепцию защиты экономического суверенитета Республики Армения" с включением относительно измеряемых показателей, превышение которых будет служить тревожным звонком к необходимости изменения экономической политики. В рамках "Концепции защиты экономического суверенитета Республики Армения" предлагается создание конституционально независимого органа – Комиссии по защите экономического суверенитета, которая будет заниматься разработкой государственной политики защиты и укрепления экономического суверенитета.